ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/1843-23 առ "01" 09 2023թ.

«Ա-Պրոգրես» ՍՊԸ
տնօրեն
Ա. Բեգլարյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-50/23-01/191 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Բեգլարյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռադիոդետալների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-50/23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 22-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-50/23-01/191 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով սահմանված է նաև, որ 71-րդ չափաբաժնում ներկայացված միկրոսխեմաների մատակարարման ենթակա քանակը 15 հատ է, որոնցից մինչ օրս մատակարարվել է միայն 12 հատը:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասամբ լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 22-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-50/23-01/191 պայմանագիրը 71-րդ չափաբաժնի չմատակարարված 3 միկրոսխեմաների մասով և առաջարկվում է ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91